«ԹԲԻԼԻՍՈԲԱ - 2014»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

# ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՈՆ



Վերականգնված շենքի արարողությանը ներկա էին նաեւ Վրաստանի կառավարության անդամներ, պատգամավորներ, միջազգային կազմակերպությունների եւ դիվանագիտական ներկայացուցչությունների ներկայացուցիչներ:

Տոնի շրջանակներում, Թբիլիսիում բացվեց ավտոթանգարան, անցկացվեց «Արվեստի կամուրջ» ցուցահանդեսը, որտեղ ներկայացվեցին եվրոպական ավելի քան 20 երկրներից ստացված լուսանկարներն ու տեսահոլովակները:

Ներկայիս «Թբիլիսոբայի» բացառությունը Ռիղեում «Գինու ավանի» կազմակերպումն էր: «Գինու ավանի» բացումն անցկացվեց խորհրդանշական բանալիով, որն այնուհետեւ փոխանցվեց Թբիլիսիի քաղաքապետին:

«Թբիլիսոբա-2014»-ի շրջանակներում անցկացվեց Թբիլիսիի «Պատվավոր քաղաքացի» կոչման պարգեւատրման ավանդական արարողությունը: Ընթացիկ «Թբիլիսոբային» Թբիլիսիի «Պատվավոր քաղաքացի» տիտղոս շնորհվեց ճարտարապետ Լամարա Աբաշիձեին, դիրիժոր Անզոր էրքոմաիշվիլուն, կոմպոզիտոր Գուրամ Բզվանելուն, դերասան Կախի Կավսաձեին, գրող Բաչանա Բրեգվաձեին, գիտությունների դոկտոր Իվա Բերաձեին, «Քարթուլի խմբի» համույթի մենակատար Գիորգի Չիրիկաձեին, գիտնական Գիվի Ղամբաշիձեին:

Ընթացիկ «Թբիլիսոբային» Թբիլիսիի «Պատվավոր քաղաքացի» տիտղոսին արժանացան նաեւ Վրաստանում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Ռիչարդ Նորլանդը եւ Իսրայելի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուվալ Ֆուկսը:



Ի տարբերություն նախորդ տոների, ներկայիս «Թբիլիսոբայի» նորամուծություններից էր «Թբիլիսիի մասին հոգացողի» կոչման սահմանումը: Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան, «դրանով ցանկանում ենք շնորհակալություն հայտնել այն մարդկանց, ովքեր ավանդ են ներդնում Թբիլիսիի զարգացման գործում»:

«Թբիլիսիի մասին հոգացողի» տիտղոսի առաջին դափնեկիրները դարձան Հանրային հեռուստատեսության գլխավոր տնօրենի տեղակալ Թամազ Տղեմալաձեն, ճարտարապետ Գիորգի Գիորգաձեն, «Էներգակապ» ԲԸ դիտորդական խորհրդի նախագահ Թեմուր Գոցիրիձեն, լրագրող Դեմիկո Լոլաձեն, Վրաստանի վաստակավոր ինժեներ Ագուլի Սոխաձեն, մանկաբույժ Քարաման Փաղավան, արվեստի վաստակավոր գործիչ Վասիլի Կիկնաձեն, ավտոբուսի միակ կին վարորդ Մարգարիտա Նարոուշվիլին եւ Ջաբա Արաբովը, որը շուրջ 40 տարի է, ինչ աշխատում է որպես դռնապան: Օտարերկրացիներից պատվավոր կոչմանն արժանացավ Բրիստոլի նախկին քաղաքապետ, Վրաստանի եւ Թբիլիսիի մեծ բարեկամ Դերեկ Պիկսը:



ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

# ԵՐԵԿՈ-ՀԱՄԵՐԳ՝ «ԹԻՖԼԻՍ, ԴՈՒ ՄՈՒՍԱ ԵՍ»



*Իրական սերը հաստատվում է նաեւ հիշողություններով: Որքան ուժեղ է սերը, այնքան առավել ուժեղ, վեհ ու հիասքանչ են հիշողությունները: Հենց նման տրամադրություն էր տիրում «Թբիլիսոբայի» տոնի շրջանակներում, Վրաստանի կոմպոզիտորների միության, Վրաստանի հայերի միության եւ Թբիլիսիի քաղաքապետարանի կողմից, կոմպոզիտորների միության փոքր դահլիճում անցկացված «Թիֆլիս, դու մուսա ես» երեկոն: Սույն խորագիրը լրիվությամբ արտահայտում էր երեկոյի գաղափարը, քաղաքի նկատմամբ երիտասարդների սերը եւ ավագ ու միջին սերնդի մարդկանց կարոտը:*

Թբիլիսին, որն իր պատմական անցյալով աշխարհի հնագույն քաղաքներից է, աչքի է ընկնում իր յուրահատկություններով, նրան բնորոշ են յուրահատուկ ավանդույթները, բանական ու բարոյական արժեքները եւ, բնականաբար, նաեւ նրա մշակութային հուշարձանները: Քաղաքը դարեր ի վեր եղել է բազում երգահանների, գրողների, բանաստեղծների ու նկարիչների ոգեշնչման աղբյուրը: Հենց այդ մասին միջոցառման իր բացման խոսքում նշեց միջոցառման կազմակերպիչ ու վարող, պրոֆեսոր Ալեքսանդր Պիրադովը: Ժամանակին ճանաչված ինժեներ, տեխնիկական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Պիրադովն արդեն մի քանի տարի է, ինչ զբաղված է մշակութային լուսավորչական գործունեությամբ եւ պարբերաբար կազմակերպում է ցուցահանդեսներ, համերգներ ու երեկոներ, որոնց գլխավոր նպատակը վրաց-հայկական մշակութային հարաբերությունների զարգացումն է ու նոր տեսանկյունից դրանց ցուցադրումը:

Ներկայիս երեկո-համերգի գլխավոր առանցքը թբիլիսահայ բանաստեղծուհի Անահիտ Բոստանջյանի տեքստերի հիման վրա վրաց կոմպոզիտորների կողմից գրված երգերն էին: Եվ, իրոք, համերգին անցկացվեց երգահաններ Գիորգի Շավերզաշվիլու («Սիրով խաղը»), Կախա Ցաբաձեի («Թբիլիսի, քեզ համար»), Անրի Մերաբովի («Դավաճանություն») եւ Վաժա Ազարաշվիլու («Միակը») կողմից գրված չորս նոր երգերի պրեմիերան:

Քաղաքային վոկալի ոճով գրված այդ երգերը կատարեցին Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի դերասան Հենրիխ Պետրոսյանը, մենակատարներ Էկա Խոշտարիան եւ Վիլլի Գրիգորյանը:

Ճիշտ է, երեկո-համերգի անկյունաքարը նոր երգերի պրեմիերան էր, սակայն երեկոյի կազմակերպիչ Ալեքսանդր Պիրադովի շնորհիվ այն դարձավ ավելի ծավալուն ու հագեցված հետաքրքիր երաժշտական համարներով, որոնք կրկին անգամ ցուցադրեցին այն սերտ կապը, որով դարեր ի վեր կապված են եղել վրաց եւ հայ ժողովուրդները: Համերգին հնչեցին վրաց եւ Վրաստանում ծնված հայ կոմպոզիտորների գործերը, որոնք ունկնդիրներին ներկայացվեցին վրաց եւ հայ կատարողների կողմից:

Համերգին հատուկ այդ նպատակով կազմավորված Մարինա Ասրիեւա (ջութակ)-Գիորգի Ջորջաձե (թավջութակ)-Գիորգի Շավերզաշվիլի (դաշնամուր) եռյակի կատարմամբ հնչեցին Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետից «Ադաջիոն»: Մարինա Ասրիեւայի վիրտուոզ կատարմամբ հնչեց նաեւ Արամ Խաչատրյանի «Ուզունդարան»:



Երեկո-համերգի ծրագրում նշանակալի տեղ էր հատկացվել վրաց կոմպոզիտորների ստեղծագործություններին: Մասնավորապես՝ Գիորգի Շավերզաշվիլու դաշնամուրային «Պասակալիան» կատարվեց կոմպոզիտորի դստեր, Զ.Փալիաշվիլու անվան կենտրոնական երաժշտական ուսումնարանի սան, Ա.Սկրյաբինի անվան միջազգային մրցույթի առաջին մրցանակի դափնեկիր Էլենե Շավերզաշվիլու կողմից, Օթար Թաքթաքիշվիլու «Պոեման» ունկնդիրներին ներկայացրեց Զ.Փալիաշվիլու անվան կենտրոնական երաժշտական ուսումնարանի սան, երիտասարդ դաշնակահարների միջազգային մրցույթների դափնեկիր Սերգեյ Մարկոսյանը: Վաժա Ազարաշվիլու չորս ձեռքի համար գրված երկու պիեսներով համերգին դաշնամուրային դուետով մասնակցեցին միջազգային մրցույթների դափնեկիրներ Քրիստինա եւ Ռեգինա Մեհրաբովաները: Վիլլի Գրիգորյանի կողմից հրեական «Հավանա գիլա», «Շալոմե» եւ մյուս հանրահայտ երգերի կատարումը առանձնակի ոգեւորություն առաջացրեց դահլիճում, ինչը էլ ավելի աշխուժացավ դաշնակահար Անրի Մեհրաբովի կողմից թբիլիսյան հին մեղեդիների կատարմամբ:

Երեկո-համերգի կիզակետը Վաժա Ազարաշվիլու կողմից բոլորին քաջ հայտնի, իր իսկ երգերի՝ «Օրերն անցնում են», «Երգը իմ ողջ ունեցվածքն է», «Փոքրիկ աղջիկ» կատարումն էր:

Ունկնդիրները տեւական ծափահարություններով իրենց երախտիքն հայտնեցին «Թիֆլիս, դու մուսա ես» միջոցառման կազմակերպիչներին ու մասնակիցներին:

Երեկո-համերգին ներկա էին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, մայրաքաղաքի վրաց եւ հայ արվեստասեր ու երաժշտասեր հասարակայնության ներկայացուցիչներ:

***ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ***

ԿՐԹԱԿԱՆ

# ԱՆՑԿԱՑՎԵՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

*Հոկտեմբերի 29-ին, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ու «International» կազմակերպության նախաձեռնությամբ, անցկացվեց դպրոցների տնօրենների խորհրդաժողով:*



Խորհրդաժողովը բացեցին կրթության փոխնախարար Լիա Գիգաուրին եւ «International» կազմակերպության ներկայացուցիչներ Դավիթ Ստոունհելն ու Մարինա Ուշվերիձեն:

Խորհրդաժողովի նպատակն էր դպրոցների տնօրեններին տեղեկատվության հանձնումը քաղաքացիական կրթության «Ապագա սերունդ» նախագծի վերաբերյալ: Նախագիծն իրականացվում է Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության աջակցությամբ եւ Ամերիկյան միջազգային զարգացման գործակալության «International» կազմակերպության ֆինանսավորմամբ:

Քաղաքացիական կրթության որակի բարձրացմանն ուղղված նախագիծը կիրարկվելու է տարածաշրջանային 480 դպրոցներում: Կրթօջախները կստանան ձեռնարկներ, ծրագրվում են մանկավարժների վարժանքներ եւ օգնության ցուցաբերում քաղաքացիական ակումբների կազմավորման եւ այլ միջոցառումների անցկացման համար:

# 16 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

*«Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիան Վրաստանում մասնագիտական կրթության բարելավման համար հատկացրել է 16 միլիոն դոլար: «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամը «Տնտեսական զարգացման համար մասնագիտական կրթություն» նախագծով համագործակցություն է սկսել Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության հետ:*



Թբիլիսիի «Քորթիարդ Մարիոտ» հյուրանոցում կայացած նախագծի շնորհանդեսին ներկա էին «Հազարամյակի մարտահրավեր-Վրաստան» հիմնադրամի գործադիր տնօրեն Մագդա Մաղրաձեն, Վրաստանի կրթության առաջին փոխնախարար Քեթի Նատրիաշվիլին, էկոնոմիկայի փոխնախարար Իրմա Քավթարաձեն, «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի վրացական ներկայացուցչության տնօրեն Քաթերի Կլեմենտին, պաշտոնական այլ անձինք:

Նախագիծն իրականացվում է 2013 թվականի հուլիսի 26-ին «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի եւ Վրաստանի կառավարության միջեւ ստորագրված համաձայնագրի շրջանակներում: Նախագծի նպատակն է մասնագիտական եւ բարձրագույն կրթության որակի բարելավման ուղղությամբ նպաստել Վրաստանում տնտեսական զարգացմանը: Նախագծի ողջ բյուջեն կազմում է 140 միլիոն դոլար, որից 16 միլիոնը տրվում է «Տնտեսական զարգացման համար մասնագիտական կրթություն» ծրագրին:

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Üºð

ØàÈàð²Î

## ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ՌԵԿՈՐԴՆԵՐԻ ՏԱՐԻ



***Հեռուսփայուլյով հաղորդեցին, որ այս փարին աչքի է ընկնում ջերմասփիճանային անոմալ երեւույթներով: Կարո՞ղ եք ավելի մանրամասն փեղեկություն հաղորդել այդ մասին:***

***Տ.Ոսկանյան***

***Բոլնիսի***

Իրոք, Երկրի վրա ջերմաստիճանը շարունակում է նոր ռեկորդներ սահմանել, եւ ընթացիկ տարին խոստանում է ամենատաքը դառնալ օդերեւութաբանական դիտարկումների ողջ 135 ամյա պատմության ընթացքում: Այդ մասին հաղորդել է օվկիանոսի եւ մթնոլորտի ուսումնասիրման հարցերով զբաղվող ԱՄՆ-ի ազգային վարչությունը, որը հոկտեմբերի 20-ին հրապարակել է իր նոր հետազոտության արդյունքները:

Դրանում նշվում է, որ սեպտեմբերին մեր մոլորակի վրա միջին ջերմաստիճանը կազմել է 15,72$^0$C, ինչն ավելի բարձր է, քան երբեւիցե: Այս տարի ջերմաստիճանի ռեկորդային ցուցանիշներ են արդեն գրանցվել մայիսին, հունիսին եւ օգոստոսին:

Ամերիկացի գիտնականները նաեւ նշել են, որ ընթացիկ տարվա առաջին ինն ամսում Երկրի վրա միջին ջերմաստիճանը հասել է 14,78$^0$C-ի: Ջերմաստիճանը հունվար-սեպտեմբերին ավելի վաղ այսչափ բարձր է եղել միայն 1998 թվականին: Միանգամայն հավանական է, որ 2014 թվականը կգերազանցի նախորդ բոլոր ռեկորդները:

Ամերիկյան կառավարական փորձագետների տվյալներով՝ անցյալ տարի մոլորակի վրա միջին ջերմաստիճանն ըստ Ցելսիուսի կազմել է 14,52 աստիճան: Դրա արդյունքում 2013 թվականը ջերմաստիճանային ցուցանիշներով գրավել է չորրորդ տեղը:

Գիտնականները գլոբալ տաքացման հիմնական պատճառներից մեկը համարում են ջերմոցային էֆեկտը, որն առաջանում է Երկրի մթնոլորտ ածխաթթվային գազի արտանետումների հետեւանքով: Մասնագետները հաշվել են, որ անցյալ տարի մթնոլորտում ածխաթթվային գազի կուտակումը ավելի քան երկու անգամ գերազանցել է 135 ամյա վաղեմության մակարդակը:

²èàÔæ²ä²ÐàôÂÚàôÜ

## ԻՆՉ Է ՊԱՏՄՈՒՄ ՄԱՇԿԸ



***Լսել եմ, որ հմուտ, փորձառու բժիշկները մի հայացքով անգամ կարողանում են որոշել, թե ի՞նչ հիվանդությամբ է փառապում հիվանդը: Նաեւ լսել եմ, որ առողջական շափ հարցերի պափասխանը կարելի է սփանալ մարդու մաշկի ուսումնասիրությունից: Որքանո՞վ է դա համապափասխանում իրականությանը:***

***Ն.Սարգսյան***

***Նինոծմինդա***

Իրականում, օրգանների գործունեության բազմաթիվ խախտումներ արտացոլվում են մաշկի վրա եւ ազդակ հնչեցնում բժշկի դիմելու համար: Նշագեղձերի, լեղապարկի բորբոքումները, ներքին օրգանների հիվանդությունները (ստամոքսի, երիկամների, լյարդի եւ այլն) մաշկի վրա կարող են ալերգիկ բնույթի փոփոխություններ առաջացնել: Մաշկային հիվանդությունների ծագման մեջ էական դեր ունեն սպիտակուցային, ածխաջրածնային, ճարպային նյութափոխանակությունների խանգարումները, վիտամինների պակասը: Մի շարք մաշկային հիվանդություններ պայմանավորված են նյարդային համակարգի խախտումներով (օրինակ՝ նեյրոդերմիտը), էնդոկրին համակարգի խախտումներով (սեբորեա), անոթների ախտահարմամբ:

Բոլոր դեպքերում մաշկի վրա փոփոխությունների առաջացումն առիթ է, որպեսզի այցելեք ոչ միայն մաշկաբանի, այլեւ թերապեւտի:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

## ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ

***Գալիք տարի ճամփորդել ցանկացողների համար ամերիկյան Lonely Planet ընկերության մասնագետները ուսումնասիրել են աշխարհի լավագույն քաղաքները, մարդկանց, բնավորություններն ու կայանալիք միջոցառումները, եւ կազմել 10 լավագույն քաղաքների ցանկը, ուր կարելի է այցելել:***

Ցանկը կազմել են ոչ միայն տուրիզմի ոլորտի մասնագետները, այլեւ լրագրողները, զբոսաշրջիկներն ու ոլորտի վերլուծաբանները:

Ցուցակի առաջատարը ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգտոնն է: Մասնագետներն այն համարում են ամենից շատ թանգարան ունեցող քաղաքն աշխարհում, որտեղ դրական են տրամադրված սեռական փոքրամասնություններին, եւ քաղաքի յուրաքանչյուր անկյունում կարելի է գտնել ռեստորան կամ սրճարան՝ յուրահատուկ եւ համեղ ճաշացանկով:

Նրանք, ովքեր սիրում են նորաձեւություն եւ նրբաճաշակություն, պետք է այցելեն Միլան: 2015թ. Տորոնտոյում կկայանա Pan American Games-ը, հետեւաբար, այն կարող է հանդիսանալ լավագույն վայր հանգստի համար:

2015թ. զբոսաշրջության համար ընտրված քաղաքների տասնյակը հետեւյալ տեսքն ունի՝ Վաշինգտոն, Էլ Չալտեն, Միլան, Ցերմատ, Վալետա, Պլովդիվ, Սոլսբերի, Վիեննա, Չենայ, Տորոնտո:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## Դ Ե Պ Ր Ե Ս Ի Ա

***Դեպրեսիան (լատիներեն depression՝ ընկճված, բառից) մի հոգեվիճակ է, որը բնութագրվում է տրամադրության, հոգեկան եւ շարժողական պրոցեսների անկումով:***



Շատ հաճախ, երբ պարզում ենք, որ մարդը դեպրեսիայի մեջ է, անմիջապես սկսում ենք խորհուրդներ տալ, հանդիմանել, որակավորել նրա բնավորությունը, ասելով, թե նա թույլ մարդ է եւ ընդունակ չէ հաղթահարելու դժվարությունները, կառավարելու եւ վերահսկելու իր տրամադրությունը, հույզերը, նա մի փոքր բանը մեծ պատմություն է դարձնում եւ այլն: Մենք այդպես ենք մտածում, որովհետեւ հաճախ չենք կարողանում տարբերել դեպրեսիան ու թախիծը: Թվում է, թե դեպրեսիան նման է հարբուխի կամ սովորական մրսածությանը, որը շուտով կանցնի: Իրականում՝ դեպրեսիան ավելի խոր հոգեվիճակ է եւ դրսեւորվում է մի շարք ախտանիշներով, որոնց մենք կանդրադառնանք:

Պետք չէ դեպրեսիա համարել ամեն մի բացասական հույզ: Դա կարող է լինել թախիծ, տրտմություն, տխրություն, տրամադրության անկում, բայց ոչ դեպրեսիա: Դեպրեսիան արտահայտվում է մի շարք խոր հույզերի, մտքերի եւ հիշողությունների դրսեւորմամբ: Մենք մեր կյանքի ընթացքում բազմիցս ապրում ենք թախիծ, անհաջողություն, կորուստ, որոնք ադեկվատ հույզեր են եւ համապատասխանում են այդ իրավիճակին: Որպեսզի տարբերենք դեպրեսիան սովորական անտրամադիր վիճակից կամ տխրությունից, դիտարկենք դրա ախտանիշները:

Դեպրեսիային բնորոշ ախտանիշներն են՝

* Թախիծը, տագնապը եւ դյուրագրգռությունը,

* Ամոթի, մեղքի զգացումները, սեփական անձի դեմ ուղղված ագրեսիան,

* Ինքնահարգանքի եւ ինքնագնահատման իջեցումը,

* Տրամադրության անկումը, կյանքի նկատմամբ հետաքրքրության կորուստը,

* Ուժերի անկումը, ոչինչ չանելու ցանկությունը, աշխատունակության, քաշի եւ ախորժակի անկումը,

* Անքնությունը կամ չափազանց քնկոտությունը, անհանգստությունը կամ անտարբերությունը,

* Գլխացավերը, ցավերը սրտի, մեջքի հատվածում՝ առանց որեւէ հիմնավոր պատճառի,

* Իմացական գործընթացների, մասնավորապես ուշադրության եւ հիշողության վատթարացումը,

* Կյանքի իմաստի կորուստը, հաճախ առաջանում են ինքնասպանության մասին մտքեր:

Եթե նշված հատկությունների դրսեւորումը տեւում է ամենաքիչը երկու շաբաթ, ապա արդեն կարելի է խոսել դեպրեսիայի մասին: Դրանք կարող են արտահայտվել նաեւ թույլ ձեւերով:

**(Շարունակելի)**

## ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԼԱՎ ՏՐԱՄԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

***Լսեք ձեր սիրելի երաժշտությունը: Չի կարելի անդադար մտածել առօրյա հոգսերի մասին:***



Աշխարհը պետք է ընկալել որպես գեղեցիկ ստեղծագործություն եւ փորձել ամեն ինչում ստեղծագործական մոտեցում ցուցաբերել: Երաժշտություն լսելիս դուք կրկին կզգաք ու կհամոզվեք, որ երկրային բոլոր հոգսերն անմիտ են եւ կթուլանաք:

Կրկին հիշեցնենք, առավոտյան արթնանալիս ձգվեք, հորանջեք, օրը սկսեք լավատեսական նոտայով: Հայելուն նայելիս՝ ժպտացեք, առավոտից սկսած՝ շատ ջուր խմեք եւ շարունակեք երաժշտություն լսել: Այս ամենը շատ հեշտ է անել: Արդյունքում՝ դուք առավոտվանից առույգության եւ լավ տրամադրության լիցքեր կստանաք:

Եթե լավ եղանակ է, առավոտյան արթնանալուց հետո 5 րոպե կանգնեք պատշգամբում եւ նայեք ծառերին ու երկնքին...

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Թե անկեղծության ծով ես անսահման՝ անմահ ես ծովի մարգարտի նման:

***ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ***
***(1914-1984)***
***Հայ բանաստեղծ***

Այն, ինչ հաճո չէ Աստծուն, չի կատարվի, ինչ էլ լինի:

***ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ***
***(XII-XIIIդդ.)***
***Վրաց բանաստեղծ***

Ֆիզիկական առողջության համար ամենակարեւոր գործոնը հոգու կորովն է: Երբ ոգին է ընկճվում, դա համահավասար է մահվան:

***ՈՒԻԼՅԱՄ ԳՈԴՎԻՆ***
***(1756-1836)***
***Անգլիացի հրապարակախոս***

Ավելի մեծ առաքինություններ են պետք դիմանալու ճակատագրի հաջողություններին, քան դժբախտություններին:

***ԼԱՌՈՇՖՈՒԿՈ***
***(1613-1680)***
***Ֆրանսիացի քաղաքական գործիչ***

Փորձել ամեն բան միանգամից անել՝ նշանակում է ոչինչ չանել:

***ԼԻԽՏԵՆԲԵՐԳ***
***(1742-1799)***
***Գերմանացի պուբլիցիստ***

Անբանությունն ու պարապությունն իրենց հետեւից արատավորություն եւ անառողջություն են բերում եւ, դրան հակառակ, խելքով առաջ շարժվողին մշտապես ուղեկցում է կյանքն ամրապնդող առողջությունը:

***ՀԻՊՈԿՐԱՏ***
***(մ.թ.ա.460-մ.թ.ա.377)***
***Հնադարյան հույն բժիշկ***

Միայն առողջ մարդը կարող է լինել ազատ, ուրախ, երջանիկ:

***Կ.ՍԵԴՐԱԿՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

²Üº Î¸àÎÜºð

** - Իմ պրակտիկայի ընթացքում ես միայն մեկ անգամ եմ սխալ թույլ տվել:*

*- Եվ ի՞նչ սխալ էր դա:*

*- Միլիոնատիրոջը բուժեցի երկու այցելության ընթացքում, դիմանալով, որ նա միլիոնատեր էր:*

** - Ասացեք, բժիշկ, խնկապե՞ս ուտելուց առաջ մի փոքր գավաթով օղի ըմպելն այդքան վնասակար է:*

*- Ոչ, սակայն շատ հաճախ պետք չէ ուտել:*

** Բժիշկը զննում է հիվանդին.*

*- Այսպե՜ս, երակազարկը նորմալ է:*

*- Բժի'շկ, ձախ ձեռքս ստուգեք, աջ ձեռքս պրոթեզ է:*

** Վնասվածքաբանականի սենյակ է մտնում ձեռքն ու ոտքը փիրակապած մի կին.*

*- Ձեզ ի՞նչ է պատահել,- հարցնում է բժիշկը:*

*- Փոշեկուլը միացրի եւ էլեկտրական հոսանքը խփեց ձեռքիս:*

*- Իսկ ձեր ոտքի՞ն ինչ է եղել:*

*- Ես էլ ոտքով հարվածեցի անպիտան փոշեկուլին:*

** - Ինչպե՞ս է քեզ հաջողվում տրամադրությունդ չգցել:*

*- Իսկ ինչո՞ւ տրամադրությունս գցեմ: Առաստաղին գրել եմ ու ամեն օր առավոտյան կարդում եմ. «Այսօր ամեն ինչ վատ է: Վաղը ավելի վատ կլինի»: Նշանակում է՝ այսօր պետք է ուրախանալ, որ ամեն ինչ այնքան վատ չէ, որքան կլինի վաղը:*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԸՆԴԳԾՎԵՑ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Համաձայն ֆրանսիական կողմի, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները պայմանավորվել են Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի միջոցով փոխանակել հակամարտության ընթացքում անհետ կորածների տվյալները:

Ֆրանսուա Օլանդը կոչ արեց ակտիվացնել բանակցային ջանքերը եւ միջազգային սկզբունքների ու ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում գտնել Լեռնային Ղարաբաղի հակամարտության երկարատեւ հանգուցալուծումը: Միաժամանակ, Ֆրանսիայի նախագահն անընդունելի համարեց ստատուս քվոյի պահպանումը: Օլանդը կոչ արեց կողմերին ցուցաբերել անհրաժեշտ քաղաքական կամք՝ հաղթահարելու տարաձայնությունները եւ իրենց ժողովուրդներին պատրաստելու խաղաղության:

Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները պայմանավորվել են շարունակել երկխոսությունը, մասնավորապես, կրկին հանդիպել 2015 թվականի սեպտեմբերին Նյու Յորքում կայանալիք ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի շրջանակներում:

Հայաստանի, Ֆրանսիայի ու Ադրբեջանի նախագահները բանակցությունների ավարտին տեղի ունեցած ընթրիքի ընթացքում քննարկել են կովկասյան տարածաշրջանի ավելի լայն խնդիրներին եւ Ֆրանսիայի հետ հարաբերություններին առնչվող հարցեր:

## ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐԻ ԼԱՅՆ ՇՐՋԱՆԱԿ



*Հոկտեմբերի 27-ին, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի հրավերով, աշխատանքային այցով Փարիզում գտնվող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Ելիսեյան պալատում հանդիպում է ունեցել Ֆրանսուա Օլանդի հետ:*

Հայաստանի եւ Ֆրանսիայի նախագահները քննարկել են հայ-ֆրանսիական հագեցած օրակարգին վերաբերող հարցերի լայն շրջանակ, անդրադարձել նաեւ տարածաշրջանային եւ միջազգային արդի խնդիրներին ու մարտահրավերներին: Սերժ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց Օլանդին՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունում Ֆրանսիայի դերակատարման եւ ԼՂ հիմնախնդրի կարգավորմանն ուղղված փարիզյան հանդիպման նախաձեռնության համար:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀՈՐԴԱՆԱՆՈՒՄ

*Հոկտեմբերի 29-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնական այցով մեկնեց Հորդանանի Հաշիմյան Թագավորություն:*



Այցի շրջանակներում Սերժ Սարգսյանը հանդիպումներ ունեցավ Հորդանանի Թագավոր Աբդալլահ Երկրորդ Իբն ալ-Հուսեյն ալ-Հաշիմիի, վարչապետ Աբդալլահ ալ-Նսուրի, Սենատի նախագահ Աբդել Ռաուֆ ալ-Ռավաբեհի եւ Ներկայացուցիչների պալատի խոսնակ Ատեֆ Յուսեֆ Սալահ ալ-Տարաունայի հետ: Հայ-հորդանանյան բանակցությունների արդյունքներով ստորագրվեցին մի շարք ոլորտներում երկու երկրների միջեւ համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանն ուղղված փաստաթղթեր:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած պատվիրակության կազմում Հորդանանի Հաշիմյան Թագավորություն այցելած Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը Ամմանի գործընկերոջ հետ Երեւանն ու Ամմանը քույր քաղաքներ հռչակելու մասին համաձայնագիր է ստորագրել:

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



*Հայաստանի ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը, Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը, ԱԺ փոխնախագահներ Հերմինե Նաղդալյանը, Էդուարդ Շարմազանովը, պատգամավորները, զոհված պետական գործիչների հարազատները, ԱԺ աշխատակազմի ներկայացուցիչները եւ խորհրդարանում հավատարմագրված լրագրողները հարգանքի տուրք մատուցեցին հոկտեմբերի 27-ի ոճրագործության զոհերի հիշատակին:*

Ներկաները ծաղիկներ են դրել Հայաստանի ազգային հերոս Կարեն Դեմիրճյանի, Հայաստանի ազգային հերոս Վազգեն Սարգսյանի, Յուրի Բախշյանի, Արմենակ Արմենակյանի, Ռուբեն Միրոյանի, Միքայել Քոթանյանի, Հենրիկ Աբրահամյանի, Լեոնարդ Պետրոսյանի հիշատակը հավերժացնող հուշակոթողի մոտ: Հայաստանի ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը եւ Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանն այնուհետեւ եղել են Երեւանի Կոմիտասի անվան պանթեոնում եւ Եռաբլուր պանթեոնում, հարգել հոկտեմբերի 27-ի ոճրագործության զոհ դարձած ՀՀ ազգային հերոսներ Կարեն Դեմիրճյանի եւ Վազգեն Սարգսյանի հիշատակը:

## «ԻՐԱՎՈՒՆՔ» ԹԵՐԹԸ ՆՇԵՑ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՔԱՌՈՐԴԴԱՐՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ




*Հայ Առաքելական եկեղեցու Արարատյան թեմի փոխանորդ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հայրապետական աղոթքով Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում մեկնարկեց «Իրավունք» թերթի 25-ամյակի հանդիսավոր արարողությունը: Թերթի հոբելյանական տարեդարձն իր ներկայությամբ պատվել էր Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:*

«Քսանհինգ տարին պատկառելի տարիք է որեւէ հաստատության համար՝ լրատվամիջոցի համար առավել եւս: ««Իրավունք»-ը դարձավ մեր անցած 25-ամյա պատմության վկաներից մեկը: «Իրավունք»-ն իր արժանի տեղն է զբաղեցնում Հայաստանի ազատ լրատվական դաշտում: Հուսով եմ՝ ձեր թերթը կընթերցեն ազատ եւ անկախ Հայաստանի շատ եւ շատ սերունդներ»,- հայտարարեց Հայաստանի նախագահը:

Թերթի կայացման գործում ունեցած մեծ ավանդի համար «Իրավունք»-ի խմբագրական խորհրդի նախագահ Հայկ Բաբուխանյանն արժանացավ «Մովսես Խորենացի» մեդալի, իսկ թերթի երկու աշխատակից պարգեւատրվեցին «Երախտագիտության» մեդալով: Միջոցառմանը ցուցադրվեց ֆիլմ թերթի անցած ուղու մասին, որին հաջորդեց արդեն համերգային ծրագիրը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ 24 ՏԱՐԵԿԱՆ Է



*Ավելի քան 24 տարի առաջ Երեւանի Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիստի կենտրոնական տան դահլիճում կայացավ Հայաստանի օլիմպիական կոմիտեի հիմնադիր համագումարը, որի ժամանակ միաձայն առաջին նախագահ ընտրվեց Ռուբեն Հակոբյանը:*

1992թ. Բարսելոնի Օլիմպիական խաղերից հետո (Հայաստանի չորս մարզիկներ այնտեղ նվաճեցին երեք ոսկե եւ մեկ արծաթե մեդալ) հայ օլիմպիականները սկսեցին նահանջել: 1996թ. Ատլանտայի օլիմպիական խաղերում գրանցվեց մեկական ոսկե եւ արծաթե մեդալ, 2000-ին՝ Սիդնեյի խաղերին ընդամենը մեկ բրոնզե պարգեւ, իսկ 2004-ին՝ Աթենքում, հայաստանցի ոչ մի մարզիկ պատվո պատվանդանին կանգնելու բախտ չունեցավ: Եվ միայն 2004-ի տարեվերջին, երբ ՀԱՕԿ-ի նախագահ ընտրվեց Գագիկ Ծառուկյանը, հայկական սպորտը կրկին սկսեց առաջադիմել: Պեկինի օլիմպիական խաղերում Հայաստանի պատվիրակության հաշվին գրանցվեց միանգամից վեց բրոնզե մեդալ: Հայ մարզիկները առավել վստահ հանդես եկան Լոնդոնում 2012թ. անցկացված օլիմպիական 30-րդ խաղերում: 16-ամյա ընդմիջումից հետո հաջողվեց կրկին արծաթե պարգեւ նվաճել: Ըմբիշ Արսեն Ջուլֆալակյանը գրավեց երկրորդ տեղը, իսկ նրա երկու թիմակիցներ դարձան բրոնզե մեդալակիր: Արդյունքում, Հայաստանի թիմը, նախորդ խաղերի համեմատ, վեր բարձրացավ 20 աստիճանով եւ 205 երկրների շարքում գրավեց 60-րդ տեղը:

Առաջընթացին լավատեղյակ են նաեւ ՄՕԿ-ի նախագահ Թոմաս Բախը եւ ԵՕԿ-ի նախագահ Պատրիկ Հիկեն: Նրանք այս մասին արտահայտվեցին օրեր առաջ Երեւանում: Պատվավոր հյուրերը մասնակցեցին օլիմպիական խաղերի հայաստանցի առաջին չեմպիոն Հրանտ Շահինյանի հուշարձանի բացմանը:

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

*Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը շնորհավորական ուղերձ է հղել Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդին՝ գահակալության 15-րդ տարեդարձի կապակցությամբ: Ուղերձում, մասնավորապես, ասված է. «Արդեն մեկուկես տասնամյակ իմաստուն եւ արգասաբեր գործունեությամբ առաջնորդում եք Ձեր հոգեւոր հոտը՝ քարոզելով խաղաղություն եւ մարդասիրություն, սերմանելով բարու եւ գեղեցիկի հունդեր մեր ժողովրդի սրտում եւ հոգում: Կրկին շնորհավորելով հոբելյանական տարեդարձի առթիվ՝ մաղթում եմ Ձեզ քաջառողջություն եւ անսպառ եռանդ՝ անսասան պահելու Գրիգոր Լուսավորչի ասպվածաշնորհ աթոռը եւ շարունակելու Ձեր վեհ առաքելությունը»:*

## ԳՅՈՒՄՐԻՆ ՆՇԵՑ ՔԱՂԱՔԻ ՕՐԸ

*Հոկտեմբերի 25-ին Գյումրին 12-րդ անգամ նշեց քաղաքի օրը: Քաղաքի օրվան նվիրված միջոցառումների մեկնարկն ազդարարվեց Գյումրու Սպանդարյան փողոցից, որը հիմնանորոգումից հետո վերաբացվեց: Գյումրու քաղաքապետ Սամվել Բալասանյանը, Շիրակի մարզպետ Ֆելիքս Ցոլակյանը, ինչպես նաեւ Գյումրի այցելած հյուրերն այնուհետեւ ոտքով շարժվեցին դեպի «Վարդանանց» հրապարակ, որտեղ տեղի ունեցավ ռետրո մեքենաների ցուցադրում: Ներկայացված մեքենաների թվում էին Տիգրան Պետրոսյանի եւ Մարտիրոս Սարյանի առաջին մեքենաները: Ցուցադրության բոլոր մասնակիցները Գյումրու քաղաքապետարանի կողմից ստացան շնորհակալագրեր:*

## ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է «ՄԵՂՈՒ. ՀԱՅԵՐԵՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ» ՄՐՑՈՒՅԹԸ

*Հայաստանում մայրենի լեզվի ամրապնդման եւ դպրոցներում լեզվամտածողության բարձրացման համար կանցկացվի «Մեղու. հայերեն բոլորի համար» դպրոցական մրցույթը: Թեեւ մրցույթն անցկացվում է առաջին անգամ, սակայն դրան մասնակցում են աննախադեպ թվով՝ ավելի քան 44 հազար աշակերտ Հայաստանից եւ Արցախից: «Մեղու. հայերեն բոլորի համար» մրցույթին մասնակցելու համար գրանցվել են 3-12-րդ դասարանի ավելի քան 44 500 աշակերտ՝ Հայաստանի եւ Արցախի 961 դպրոցից: Այն անցկացվելու է հոկտեմբերի 30-ին:*

## ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում շուտով կստեղծվի Թանգարանային կրթության կենտրոն: Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի (DVV International), ԻԿՕՄ թանգարանների աշխատողների-բարեկամների ասոցիացիայի նախաձեռնությամբ ստեղծվող կենտրոնը երեք տարի շարունակ կգործի թանգարանի տարածքում: Կենտրոնը կզբաղվի հայաստանյան թանգարանների աշխատողների վերապատրաստմամբ, կմշակի կրթական ծրագրեր եւ կիրականացնի այլ գործառույթներ: Թանգարանային կրթության կենտրոնն իր գործունեությունը կսկսի այս տարվա նոյեմբերի վերջին: Մեկնարկին զուգահեռ, ցանկություն կա կազմակերպել «Թանգարանային կրթության շաբաթ» խորագրով միջոցառումների շարք:*

## ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՒՄ Է

*Վերջնականապես ճշգրտվել է ըստ բուհերի բակալավրի եւ մագիստրոսի կրթական ծրագրերով պետության կողմից ուսման վարձի փոխհատուցման ենթակա ուսանողների թիվն ու ֆինանսավորումը: Ինչպես տեղեկացրել է Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, 1074 սոցիալապես անապահով ուսանողը ենթակա է պետության կողմից ուսման վարձի փոխհատուցման, որից բակալավրի կրթական ծրագիր՝ 1033 ուսանող, մագիստրոսի կրթական ծրագիր՝ 41 ուսանող: Այս նպատակի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները կազմում են 220 միլիոն 504 հազար 800 դրամ: Վարձի փոխհատուցումից օգտվել է ԵՊՀ՝ 239, ՀՊՄՀ՝ 158, ՀՊՏՀ՝ 86, ԵՊԲՀ՝ 64, ինչպես նաեւ այլ բուհերի ուսանողներ:*

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# ՆՈՅԵՄԲԵՐ

*01.11.2014. Տոն բոլոր սրբերի՝ հների եւ նորերի, հայտնիների եւ անհայտների*

Հայ եկեղեցին այս տոնով նշում է բոլոր այն սրբերի հիշատակը, որոնց անունները չեն անցել տոնացույցի կամ եկեղեցական օրացույցի մեջ, սակայն նրանց սուրբ անունները գրված են Երկնքի արքայության սրբազան մատյանում:

*03.11.2014. Հռոմի Սուրբ Ստեփանոս հայրապետի, Սուրբ քահանաների, սարկավագների եւ մարդկանց հիշատակության օր*

*04.11.2014. Սուրբ Ակիփսիմոս եպիսկոպոսի, Սուրբ Հովսեփ քահանայի, Սուրբ Այիթալա սարկավագի եւ Սուրբ Պղատոն վկայի հիշատակության օր*

*08.11.2014. Սուրբ Գաբրիել եւ Սուրբ Միքայել հրեշտակապետների եւ ողջ երկնային զորքի հիշատակության օր*

## ՎԱՐԿԱՆԻՇ

# ՎՐԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻ ԹՎՈՒՄ



*«Լրագրողները առանց սահմանների» միջազգային կազմակերպությունը հրապարակել է աշխարհի երկրներում ԶԼՄ-ների ազատության մակարդակն անդրադարձնող ինդեքսը, ըստ որի՝ Վրաստանն զբաղեցնում է 84-րդ տեղը, իսկ Հայաստանը՝ 78-րդ հորիզոնականը:*

Հրապարակված ինդեքսում Թուրքիան 154-րդն է, Իրանը՝ 173-րդը, իսկ Ռուսաստանը՝ 148-րդը: Ադրբեջանը՝ 160-րդը: Ինդեքսի ետնամասում հայտնվել են այնպիսի երկրներ, ինչպիսիք են Գամբիան, Սվազիլենդը, Պակիստանը, Եգիպտոսը, Բիրման, Եթովպիան, Կամբոջան, Չադը, Անգոլան, Գվատեմալան, Ուգանդան, Մոնղոլիան եւ ուրիշներ: Մամուլի ազատության ինդեքսով ամենից վատ վիճակը տիրում է Ուզբեկստանում (166-րդ տեղ) եւ Թուրքմենստանում (178-րդ տեղ):

## ՆՈՐՈՒՅԹ

# ԿԲԱՑՎԻ ՌՈՒՍԱԼԵԶՈՒ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ

*Եվրամիությունը ակտիվորեն աշխատում է «Արեւելյան գործընկերության» երկրների (Վրաստան, Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Մոլդովա, Ուկրաինա) համար ռուսալեզու տեղեկատվական հեռուստաալիք ստեղծելու վրա:*

Հեռուստաալիքն ստեղծվում է աջակցություն ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի հովանու ներքո, որը ղեկավարում է լեհ Եժի Պոմյանովսկին: Նախագծի աշխատանքային անվանումն է՝ «Եվրոպական հեռուստատեսություն «Արեւելյան գործընկերության» երկրների համար», ոմանք այն անվանում են նաեւ «Եվրոպայի ձայն»:

Լեհաստանի ԱԳ նախարարությունը եկող տարվա համար արդեն 3 մլն զլոտի (1 մլն դոլար) է հատկացրել հեռուստաալիքի ֆինանսավորման համար: Ինչպես ավելի վաղ Լեհաստանի Սեյմի արտաքին գործերի հանձնաժողովի նիստի ընթացքում հայտնել է Լեհաստանի արտաքին գործերի փոխնախարար Կատաժինա Կացպերչիկը, հեռուստաալիքի հայեցակարգը պետք է պատրաստ լինի մինչեւ տարեվերջ: Դրանից հետո ԵՄ-ի անդամ երկրները կգնահատեն դրա հեռանկարները:

## ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

# ՋԱՆԱՍԵՐ ՈՒ ՍԻՐՎԱԾ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐՈՒՀԻՆ



Ցավոտ կորուստ կրեցինք վիրահայերս: Վերջերս կյանքից հեռացավ Օֆելյա (Սանամ) Ներսիսյանը: Անուն, որի հետ է կապված թբիլիսահայ տասնյակ սերունդների ուսման ու դաստիարակության գործը:

Հետաքրքիր իրողություն: Օֆելյա Ներսիսյանը Թբիլիսիի նախկին թիվ 36 իգական, այժմ՝ թիվ 104 դպրոցի, առաջին շրջանավարտներից էր:

Բարձրագույն կրթություն ստանալուց հետո՝ վերադառնում է հարազատ կրթօջախ՝ որոշ ժամանակ համատեղելով ուսուցչի ու գրադարանավարի աշխատանքները: Եվ, գրեթե, մինչեւ կյանքի վերջը՝ 1952-2011թթ. անմնացորդ նվիրումով, խոնարհաբար եւ սիրով ծառայեց իր սիրած գրադարանավարության գործին, մատենագետի հմտությամբ ու ճաշակով կահավորեց գրադարանը, որի ֆոնդը հարստացնելով հասցրեց 13 հազար անուն գրքի:

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության կողմից՝ քաղաքային գրադարանների միջեւ հայտարարված մրցույթներում, Օֆելյա Ներսիսյանի գրադարանը մշտապես գրավել է առաջնակարգ՝ առաջին, երկրորդ եւ երրորդ տեղերը, իսկ գրադարանավարուհին՝ արժանացել նախկին Խորհրդային Միության կրթության նախարարության պատվոգրի (1987թ.):

Ընկեր Օֆելյան (այդպես էին նրան դիմում) ազատ ժամանակ չուներ. կազմակերպում էր միջոցառումներ, հետաքրքիր քննարկումներ: Ու մինչեւ վերջ էլ տիկին Օֆելյան մնաց իր գործի նվիրյալը, կարողացավ ազնվորեն ու անաչառորեն գնահատել դիմացինին, հարգեց ու հարգվեց շրջապատում՝ վաստակելով բարի համբավ ու անուն թե՛ դպրոցի, թե՛ ողջ վիրահայության շրջանում:

Հուսանք, որ դպրոցի տնօրինությունը կընդունի մերօրյա անվանի բանաստեղծ, հասարակական գործիչ Գիվի Շահնազարի առաջարկը՝ թիվ 104 դպրոցի գրադարանը Օֆելյա Ներսիսյանի անվամբ կոչելու մասին:

Խունկ, մոմ ու խորին խոնարհում քո լուսավոր շիրմիդ:

***ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ***
***Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու ուսումնական նյութերի համակարգող***

## ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԹԲԻԼԻՍԻԻ ՄԻՋԵՎ ՉՎԵՐԹԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵՑԻՆ

*Վեցամյա ընդմիջումից հետո օդային հաղորդակցությունը Թբիլիսիի եւ Մոսկվայի միջեւ վերականգնվեց: «Աերոֆլոտի» Airbus A320 ինքնաթիռը Թբիլիսի ժամանեց հոկտեմբերի 27-ի ժամը 3-ին, ապա Մոսկվա թռավ 100 ուղեւորով:*



Այսուհետեւ ռուսական ավիաընկերությունը Մոսկվա-Թբիլիսի-Մոսկվա չվերթերը կկատարի ամեն օր: Երկու ուղղություններով տոմսի գինը կազմում է մոտ 350 եվրո:

Հիշեցնենք, որ Մոսկվա-Թբիլիսի չվերթերը դադարեցվել էին 2008 թվականի օգոստոսյան պատերազմից հետո: Մասնակիորեն չվերթերը վերսկսվեցին 2010 թվականին: Ռուսաստանի հետ հարաբերություններում Վրաստանի վարչապետի հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն ողջունեց Մոսկվայի եւ Թբիլիսիի միջեւ պարբերական չվերթերի վերականգնումը: Նրա խոսքերով, դա կնպաստի զբոսաշրջության զարգացմանը եւ տոմսերի սակագների նվազեցմանը:

Ախալքալաքիի մունիցիպալիտետի սակրեբուլոն եւ վարչությունը, «Վրաստան» թերթի խմբագրությունը, Վրաստանի հայերի միությունը ցավակցում են Ախալքալաքիի մունիցիպալիտետից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Սամվել Պետրոսյանին, սիրելի մոր՝

***Ասյա (Աստղիկ) Անդրանիկի ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ***

մահվան կապակցությամբ:

Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի կոլեկտիվը, «Վրաստան» թերթի խմբագրությունը ցավակցում են Նորա եւ Ֆելիքս Խաչատրյաններին, սիրելի եղբոր եւ աներորդի՝

***Էդուարդ Իվանի ՓԱՓԱԽՉՅԱՆԻ***

մահվան կապակցությամբ:

# ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Հացից կամ տարեկանի ալյուրից պատրաստվող թթվահամ ըմպելիք: 3.Մանկական վարակիչ հիվանդություն: 6.ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Օլեգ ...: 10.Մարզ Հայաստանում: 11.Ռուս արձակագիր, բանաստեղծ Իվան ...: 13.Թշնամուց խլված գույք, արժեք: 14.Վիշապների ընտանիքի հսկա օձ: 15.Ռուս բանաստեղծ, առակագիր, թարգմանիչ Իվան ...: 18.Երկար զարդարուն զգեստ, պատեգոտ: 19. Փոքր արդյունաբերական քաղաք Հայաստանի Սյունիքի մարզում: 21.Քաղաք Ռուսաստանում: 25.Քաղաք Ուզբեկստանում, Ֆերգանայի հովտում: 28.Հռոմի տեղապետը Հրեաստանում, Քրիստոսի մահապատժի հրամանը արձակողը: 32.Վրաց օպերային երգչուհի ... Ճղոնիա: 33.Նահանգ ԱՄՆ-ում: 34.Բնական կամ արհեստական երկար ու խոր փոս: 37.Որեւէ բանի իրագործման առհավատչյա, երաշխիք: 38.Հայ բոլշեւիկ հեղափոխական գործիչ: 39.Պղնձի համաձուլվածք տարբեր քիմիական տարրերի, գլխավորապես մետաղների հետ: 40.Փորձով մանկաբարձություն սովորած կին: 41.Մի քանի հոգու համար միաժամանակ նստելու հարմարանք: 42.Թաղամաս Նյու Յորքում: 43.Տարփուհի, սիրուհի:

***ՈՒՂՂԱՁԻԳ.*** 1.Հնդկացիների առաջնորդ Հյուսիսային Ամերիկայում: 2.Չամուսնացած կին կամ տղամարդ: 3.Հավազգիների ընտանիքի փոքրիկ թռչուն: 4.Սուրճի նստվածքը: 5.Երկրաչափական մարմին: 6.Վարժեցնելու հատուկ համակարգ: 7.Թխվածքի տեսակ: 8.Ամերիկացի նշանավոր հոգեբան: 9.Ապակեպատ պատշգամբ: 11.Հայտարարություն որեւէ մեկի մասնակցության դեմ՝ գործի քննության ժամանակ: 12.Բազմահարկ բնակելի տուն Հին Հռոմում: 16.Սպորտային թիմային խաղ: 17.Գետ Մեքսիկայում: 20.Կրկեսի խորհրդային դերասան, աճպարար Էմիլ ...: 22.Գյուղ (Միջին Ասիայում եւ կովկասյան լեռնականների մոտ): 23.Շոմին, քիմոն, քեմոն (համեմունք): 24.Իտալացի երգահան Վինչենցո Բելլինիի օպերան: 26.Ստեղնաշարային երաժշտական գործիքների ընդհանուր անվանումը: 27.Հրաբխային ապար: 28.Անտարկտիդայում ապրող ջրալող, չթռչող թռչուն: 29.Ղեկը վարող մասնագետ: 30.Ժամանակավոր թեթեւ շինություն՝ խաղերի, հանգստի, առեւտրի համար: 31.Կղզի Ռուսաստանի հեռավոր արեւելյան մասում: 34.Վատորակ արտադրանք, ապրանք: 35.Հին ռուսական լարային կսմիթավոր երաժշտական գործիք: 36.Հոդվածոտանիների տիպին պատկանող թունավոր կենդանի: 38.Ձեռնարկության, հիմնարկի դրոշմ: 39.Աչքի ծիածանաթաղանթի միջի անցքը, որով լույսը թափանցում է աչքի ներս:

***Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ***

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Վատիկան: 9.Օսկար: 10.Սաթխա: 11.Փոշոտում: 12.Սերոբ: 14.Լեւան: 16.Նավակ: 17.Տարոն: 19.Պառավ: 21.Մարան: 22.Միշել: 26.Շաքար: 27.Վաճառական: 28.Սկսնակ: 29.Ասրյան: 30.Դեկորատիվ: 33.Մեդալ: 34.Լեյլի: 36.Դավիթ: 40.Դոն: 42.Ասպարեզ: 45.Փթթուն: 46.Մարգո: 47.Քարաքոս: 48.Թունիս: 49.Բիրմա: 50.Շամիրամ:

***ՈՒՂՂԱՁԻԳ.*** 1.Մադոյան: 2.Սիմոն: 3.Բարունակ: 4.Ոսկեծամ: 5.Քանոն: 7.Կարեն: 8.Ախթամար: 13.Բարեւ: 14.Լուլան: 15.Ջավակ: 18.Մարթա: 20.Վիլայեթ: 21.Մարսել: 23.Լարել: 24.Քակոր: 25.Տավար: 26.Շատիլ: 30.Դար: 31.Վեր: 32.Սան: 33.Միություն: 35.Տոն: 37.Ասպատակ: 38.Սանահին: 39.Բերոյան: 41.Հուսիկ: 43.Ղարիբ: 44.Ագամա:

Խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աբոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445